ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
т. XXVII, № 5, 1974

ԼՐԱՏՈՒ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1973 թ. սեպտեմբերի 5—7-ը Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում տեղի ունեցավ Համամիութենական բուսաբանական ընկերության հինգերորդ համագումարը։ Համագումարի հիմնական նպատակն էր՝ ա) ընդհանրացնել ՍՍՀՄ-ում բուսաբանական գիտության տարբեր մասնաճյուղերում ձեռք բերված նվաճումները, բ) 12-րդ համաշխարհային բուսաբանական կոնգրեսի նախապատրաստական աշխատանքների ընթացքը և գ) բուսաբանական ընկերության ղեկավար օրգանների վերընտրությունը։

Համագումարի աշխատանքներին մասնակցում էին միության բոլոր հանրապետություններից եկած շուրջ 900 բուսաբան։ Համամիութենական բուսաբանական ընկերության հայկական բաժանմունքը առաջադրել էր 10 դելեգատ, որոնցից 3-ը տարբեր պատճառներով չներկայացան։ Համագումարի աշխատանքներին մասնակցեցին Ա. Ա. Ախվերդովը, Լ. Լ. Օսիպյանը, Ն. Վ. Միրզոևան, Վ. Ս. Բաղալյանը, Մ. Ս. Գզիրյանը, Ն. Ն. Թամբյանը, Ա. Մ. Բարսեղյանը։ Համագումարը բաց արեց բուսաբանական ընկերության պրեզիդենտ Ե. Մ. Լավրենկոն։ Համառոտակի բնութագրելով ՍՍՀՄ-ում բուսաբանական գիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, նա մասնավորապես նշեց, որ անհրաժեշտ է միջհամագումարային ժամանակաշրջանը կրճատել, ավելի հաճախակի հավաքվել և քննարկել բուսաբանական գիտության կենճոռտ և վիճելի հարցեր։

Պլենար նիստում առաջինը ելույթ ունեցավ Ե. Մ. Լավրենկոն «Բուսաբանական գիտության հիմնական խնդիրները և մարդու ու բիոսֆերայի փոխհարաբերության պրոբլեման» թեմայով։ Նա մասնավորապես նշեց, որ գիտատեխնիկական պրոգրեսը դժվարին վիճակի մեջ է գցել բնական բուսական ծածկույթը և ֆլորան։ Այն քանի գնում կրճատվում է տարածական առումով ու ֆլորիստիկ կազմով աղքատանում։ Անհրաժեշտ է այսուհետև բուսական ծածկույթի ու ֆլորայի ուսումնասիրությունները տանել երկու ուղղությամբ՝ մարդու ակտիվ և պասսիվ ներգործության պայմաններում։ Նա հատկապես կանգ է առնում բիոգեոցենոլոգիական ուսումնասիրությունների, բնության պաշտպանության, արգելանոցների և արգելավայրերի առանձնացման հարցի վրա, հատուկ նշելով մեր երկրում տափաստանային արգելանոցների սակավությունը։ Դա մասնավորապես վերաբերվում է Հայաստանին, որի տերիտորիայի կեսից ավելին լինելով լեռնային տափաստաններ, առ այսօր չունի ոչ մի տափաստանային արգելանոց։

Պլենար նիստի հաջորդ զեկուցումը կարդաց Պ. Մ. Ժուկովսկին։ Այն նվիրված էր կուլտուրական բույսերի տաքսոնոմիային։ Բազմավաստակ բուսաբանը մասնակիցների ուշադրությունը հրավիրեց Միության շատ բուսաբանական հաստատությունների կողմից մոռացության կամ անուշադրության մատնված կուլտուրական բույսերի սիստեմատիկայի վրա։

Հաջորդ զեկուցմամբ «Բուսաբանական գիտության արդի վիճակը Ուկրաինայում» թեմայով հանդես եկավ Կ. Մ. Սիտնիկը։ Նա հաղորդեց, որ ներկայումս Ուկրաինան, Լենինգրադից հետո, երկրորդ խոշոր բուսաբանական կենտրոնն է ՍՍՀՄ-ում։ Ուկրաինայի տարբեր քաղաքներում՝ Կիևում, Խարկովում, Լվովում և այլուր հավասարապես մշակվում են ժամանակակից բուսաբանության բոլոր ակտուալ պրոբլեմները։

Կ. Մ. Սիտնիկը կանգ առավ նաև Կիևի բուսաբանական ինստիտուտի գործունեության վրա։

Համագումարի պլենար նիստի երեկոյան բաժնում հետաքրքիր զեկուցում կարդաց Ա. Լ. Թախտաջյանը։ Նա շարադրեց համաշխարհային բուսաբանական գիտության կարգացման արդի խնդիրներն ու զարգացման հեռանկարները։ Առանձնապես կանգ առավ ՍՍՀՄ-ում գիտահետազոտական աշխատանքների հաջող ընթացքին խոշընդոտող նյութա-տեխնիկական բազայի սահմանափակության վրա։ Իր զեկուցման վերջում Ա. Լ. Թախտաջյանը հանդամանորեն անդրադարձավ 12-րդ համաշխարհային բուսաբանական կոնգրեսի նախապատրաստական աշխատանքներին։

Կոնգրեսի կազմակերպչական աշխատանքների մասին զեկուցեց կազմբյուրոյի գլխավոր քարտուղար Ս. Վ. Զալենսկին։ Նա նշեց, որ կոնգրեսին մասնակցել ցանկացող արտասահմանյան

բուսաբանների քանակը գնալով շատանում է, միայն Ամերիկայից այժմ ցանկություն են հայտնել մասնակցել 2000, ՍՍՀՄ-ից՝ 4000 մարդ։

Համագումարում գործում էին հետևյալ սեկցիաները. 1. բուսական աշխարհի պաշտպանության սեկցիա, 2. բույսերի ֆիզիոլոգիայի՝ ա) սիմպոզիում՝ արմատները, նրանց ֆունկցիաները և ստրուկտուրան, բ) սիմպոզիում՝ տափաստանների և անապատների քսերոֆիտ բույսերի ֆիզիոլոգիան, 3. բարձրակարգ բույսերի սեկցիա. ա) սիմպոզիում՝ բիոսիստեմատիկական և բարձրակարգ բույսերի էվոլյուցիան, բ) սիմպոզիում՝ բարձրակարգ բույսերի ֆլորայի ուսումնասիրման հարցերը, գ) սիմպոզիում՝ բիոլոգիայի ակտուալ հարցերը, 4. ֆլորայի և բուսականության պատմության, 5. գեոբոտանիկայի՝ ա) սիմպոզիում՝ մաթեմատիկական մեթոդների օգտագործումը բուսական ծածկույթի ուսումնասիրման գործում, բ) սիմպոզիում՝ բուսական ծածկույթի արդյունավետությունը, 6. ցածրակարգ բույսերի՝ ա) սիմպոզիում՝ ալգոլոգիայի ակտուալ հարցերը, բ) սիմպոզիում՝ միկոլոգիայի ակտուալ հարցերը, գ) սիմպոզիում՝ լեխենոլոգիայի ակտուալ հարցերը։

Համագումարի 6 սեկցիաներում լսվեց 89 զեկուցում, 95 ֆիքսացված ելույթ, այլ կերպ ասած մեկ օրում կարդացվեց 184 զեկուցում։

Ընկերության հաշվետվությունից հետո սկսվեց բուսաբանական ընկերության ղեկավար օրգանների ընտրությունը։ Համամիութենական բուսաբանական ընկերության պրեզիդենտ ընտրվեց ՍՍՀՄ և Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Արմեն Լևոնի Թախտաջյանը։

Համագումարի վերջում, հանրագումարի բերելով կարդացված զեկուցումները, համառոտակի հաղորդվեցին առանձին սեկցիաների գործունեության արդյունքները։

Ա. Մ. ԲԱՐՍԵՂՅԱՆ